

ԱՐԵՎԵԼՔ—ԱՐԵՎՍՈՒՏՔ» ՀԱԿՍԴՐՈՒՅԹԸ  
ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԸՄԲՈՆՄԱՄԲ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս էդ. Մ. ԶՐՐԱՇՅԱՆ

1919 թ. նոյեմբերի 21-ին Թումանյանը գրել է հետևյալ քառյակը.

Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն,  
Հերիաթական պալատներում ըստասում են իմ հոգուն.  
Ի՞նչ եմ շինում էս ցեխերում, ազմուկի մեջ վայրենի...  
Ա՛խ. թև նորից զըտենեմ ճամփան դեպի Լնտե՛ղ, դեպի տո՛ւն...

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծն այստեղ երազում է հոգով վերա-  
դառնալ դեպի մի հարազատ միջավայր, մի բաղձալի հանգրվան, որը նա  
հավաքականոթեն անվանում է պարզապես «տուն»։ «Ա՛խ, թե նորից գտնեմ  
ճամփան դեպի Լնտե՛ղ, դեպի տո՛ւն»։ Այս խոսքերն անմիջապես զուգահեռ  
են առաջացնում «Անուշի» հայտնի պատկերի հետ, որը ելակետային նշա-  
նակություն ունի պոեմի ըմբռնման համար. «Ու՛ թևերն ահա փըռած տիրա-  
բար՝ Թրոշում է հոգիս, թըռչում դեպի տուն»։ Մակայն, եթե «Անուշի» մեջ  
«տունը» խորհրդանշում է բանաստեղծի հայրենի եզերքը, նրա հոգու ցան-  
կալի ապաստանը, ապա բերված քառյակի մեջ դա շատ ավելին է։ Պարզ է,  
որ «Արևելքի եղեմները» կամ «հեթաթական պալատները» բանաստեղծի  
համար խորհրդանշում են մի վերին իդեալական աշխարհ, ուր և ամբողջ  
կույրամբ ձգտում է առօրյա կյանքի «ցեխերում», «վայրենի ազմուկից»  
հոգնած ու զգված նրա հոգին։

Այս քառյակում Արևելքի հակադիր բևեռն ուղղակի չի նշվում, այն միայն  
կարող է ենթադրվել։ Այնինչ դրանից մեկ ու կես տարի անց՝ 1921 թ. մայիսի-  
սի 1-ին գրված մի այլ քառյակի մեջ «Արևելք—Արևմուտք» հակադրությունը  
զժազրվում է ըստ ամենայնի որոշակի ու բացահայտ։ Ահա այդ քառյակը.

Արյունալի աղետներով, ազմուկներով ահարկու,  
Արևմուտքի ըստրուկները մեքենայի և ոսկու՝  
Իրենց հոգու անսպասելի խուսափում են խուտներամ  
Գեղ Արևելքն աստվածային—հայրենիքը իմ հոգու...

Ինչի՞ մասին է այս քառյակը, ո՞րն է այստեղ արտահայտված հակա-  
դրության իմաստը։ Թումանյանին նվիրված գրականության մեջ այս տողերն  
ուղղակի կապվել են ժամանակի աշխարհաքաղաքական դեպքերի հետ, մեկ-  
նաբանվել իբրև նրանց անմիջական արձագանք։ Դրա ամենացայտուն օրի-  
նակը Վարդգես Ահարոնյանի մոտեցումն է, որն իր գրքում այսպիսի բացա-  
տրություն է տվել. «Այս քառյակը գրված է 1921-ին, այսինքն՝ այն ժամա-  
նակ, երբ Թուսաստանում բոլշևիկյան հեղափոխությունը իր ամբողջ թափի  
մեջ էր, երբ, թվում էր թե բոլշևիկմին պիտի հաջողվի Արևելքը ոտքի հանել  
ընդդեմ Արևմուտքի»։ Եվ ապա, շարունակելով իր միտքը, հուշագիրն ավե-  
լացնում էր. «Ակնհերև է, որ վերի տողերի (այսինքն՝ քառյակի—էդ. Զ.) մեջ

արտահայտվել է ժամանակի ողին, ճիշտ այդ օրերին կովկաս խուժած բուլ-  
շևիզմի շահավանցված արևելասիրությունը<sup>1</sup>:

\*Նևարկովոյ քառյակի մեջ բացահայտ քաղաքական իմաստ է տեսել նաև  
Արսեն Տերտերյանը՝ դրելով, թե այստեղ անդրկովկասյան «ժողովուրդների  
եղբայրությունը Բուժանյանը հակադրում է Արևմտյան Եվրոպայի իմուլե-  
րիալիստական գիշատիչներին, որոնց նպատակն է գաղութացնել մեր եր-  
կիրը և մեղ դարձնել կապիտալիզմի ստրուկներ»։ Ավելին՝ գրականազետը  
համոզված է, որ այս քառյակը գրված է «մայիսի մեկի տոնի առիթով»:

Արտաքին ճշմարտանմանություններ հանդերձ՝ այս ուղղակի քաղաքական  
վերագրումները, մեր կարծիքով, անհիմն են և անընդունելի: Այս քառյակի  
մեջ չպետք է որոնել ո՛չ «բուլշևիկյան արևելասիրություն», ո՛չ էլ «պայքար  
գաղութատիրության դեմ»: Ինչպես հայտնի է, քաղաքական բացահայտ  
նպատակադրումը, օրվա որևէ հրատապ խնդրի ուղղակի արծարծումը Բու-  
ժանյանի գեղարվեստական երկերին բնորոշ չէ ընդհանրապես: Առավել ևս  
սա վերաբերում է նրա քառյակներին, որոնք գրեթե միշտ շոշափում են  
մարդկային կյանքի և նույնիսկ ավելին՝ տիեզերական գոյության հավերժա-  
կան խնդիրներ և առհասարակ հեռու են ժամանակային ու տեղադրական  
կոնկրետացումից: Տվյալ քառյակն էլ ոչ թե որևէ առանձին դեպքի կամ իրո-  
դություն արձագանք է, այլ բանաստեղծի մտածողության մի որոշակի կողմի  
շարունակություն և հանրագումար: Նրա մեջ արտահայտվել է մի ընդհա-  
նուր իմաստասիրական հայացք «Արևելք—Արևմուտք» հակադրությի շուրջ,  
որն իբրև համոզմունք ձևավորվել ու մշակվել է տարիների ընթացքում: Այս  
առումով շատ ավելի իրավացի է հնչում Վ. Ահարոնյանի մի ուրիշ միտք,  
ըստ որի տվյալ քառյակի «տողերի մեջ խտացված է Հովհ. Թումանյանի աշ-  
խարհայեցողության հիմնական գծերից մեկը»<sup>2</sup>:

Իրոք, վերհիշենք քառյակի բառային պատկերները և կհամոզվենք, որ  
նրանց մեջ արտահայտվել է մի ամբողջական հայացք աշխարհի իրկու «թե-  
վերի»՝ Արևելքի և Արևմուտքի մասին: Արևմուտքը ներկայացնող մարդիկ  
բնութագրվում են իբրև «մեքենայի և ոսկու ստրուկներ», նրանց արարքները  
համարվում են արյունայի և ահարկու, իսկ նրանց հոգին՝ անապատ: Վիթ-  
խարի, համադրական բովանդակության պատկերներ են սրանք, որ անվե-  
րապահորեն բացասական իմաստ ունեն: Սրանց հակադրվում է Արևելքը, որ  
ոչ միայն համարվում է բանաստեղծի «հոգու հայրենիքը» (սրանով արդեն  
ամեն ինչ ասվում է), այլև բնութագրվում է մի բարձրագույն, համապար-  
փակ մակդիրով՝ աստվածային:

Ո՞րն էր այս ծայրահեղ հակադրության հիմքն ու իմաստը: Սա շատ կա-  
րևոր՝ Թումանյանի հայացքների համակարգն ըմբռնելու համար սկզբունքա-  
յին նշանակություն ունեցող մի խնդիր է, որն առ այսօր առանձին քննու-  
թյան նյութ չի դարձել: Փորձենք ի մի բերել և գնահատել այս հարցի շուրջ  
եղած հիմնական տվյալները:

Նախ, նորից լսենք Թումանյանի կրտսեր ժամանակակիցին՝ Վարդգես  
Ահարոնյանին, որք տարիներ շարունակ հնարավորություն է ունեցել կենդանի  
շփման մեջ մոտիկից գիտելու բանաստեղծի վերաբերմունքը, լսելու նրա  
կարծիքները առաջին շուրթերից: Նրա գրքի հուշագրական էջերում կան նաև  
այսպիսի տողեր. «Հովհ. Թումանյանը Եվրոպայի և առհասարակ Արևմուտքը  
չէր սիրում: Եվրոպացի իր արտաքինով, նիստ ու կացով, Հովհ. Թումանյա-  
նը, սակայն, արևելցի էր իր ողջ էությունը, ոտից գլուխ: Արևելցի՝ բառիս  
լավագույն իմաստով: Գնահատում էր Արևմուտքի մշակույթը, բայց ատում

1 Վ արդգես Ահարոնյան. Հովհաննես Թումանյան. Մարդը և բանաստեղծը. Բոս-  
տոն, 1936, էջ 107—108:

2 Արսեն Տերտերյան. Հայ կլասիկներ. Երևան, 1944, էջ 781:

3 Վ. Ահարոնյան. նշվ. աշխ., էջ 108:

էր կարողացողների անսրտությունը և ընչարաղցությունը: Սիրում էր Արևելքը և Արևելքի մշակութային արժեքները շատ բարձր էր գնահատում<sup>4</sup>:

Ավելացնենք, որ այս տողերի հեղինակն Արևմուտքի նկատմամբ Թումանյանի յայտասական վերաբերմունքով է բացատրում նաև այն փաստը, որ 1906 թ. նա ի վերջո հրաժարվել է Հետի և Ավետիս Ահարոնյանի հետ արասասհաման մեկնելու դադարափարից, իսկ 1921 թ. վերջին, գտնվելով Կ. Պոլսում, չի ցանկացել մի քալլ էլ անել՝ ուղևորվել դեպի Եվրոպա և Ամերիկա: Այդ պնդումները շատ վիճելի են, համեսունդուսը՝ սիակողմանի: Օրինակ, հայտնի է, որ Կ. Պոլսից Եվրոպա անցնելու ծրագրից Թումանյանն ստիպված էր հրաժարվել սկսված հիվանդության պատճառով: Այդ մասին կա բանաստեղծի դուստր նվարգի միանգամայն հավաստի վկայություն<sup>5</sup>: Սակայն, սրանով հանդերձ, Վ. Ահարոնյանն իբրև հուշագիր, անշուշտ, ճշմարտացի է ներկայացնում Թումանյանի հայացքը Արևելք—Արևմուտք խնդրի վերաբերյալ, և դա լիովին համընկնում է 1921 թ. գրած քառյակի ոգուն ու տասին:

Քննարկվող խնդրի մի շարք անդրադարձներ կան նաև Թումանյանի հողվածներում, նամակաների ու զրույցների մեջ: Սակայն, նախքան նրա առաջագրած գրությունների շարադրանքը, պետք է ասել, որ Թումանյանի առանձին մտքեր ու խոստովանություններ երբևմն կարող են հակասական կամ անհամատեղելի թվալ, եթե դրանք կտրվեն ընդհանուր բնագրից, ենթարկվեն աստուցի կամ միակողմանի մեկնաբանության: Ահա այդպիսի մի օրինակ:

Վերցնենք 1919 թ. հունվարին գրված «Պատանեկության օրերից» հոդվածը, որը նվիրված է աղգային-հասարակական հայտնի գործիչ Ռոստոմի (Ստեփան Զորյան) հիշատակին: Խոսելով վաղ տարիներին իրենց վարած վեճերի մասին, որոնց նյութը հայրենի և օտար գրականության, աղգային և միջաղգայական ըմբռնումների փոխհարաբերության հարցերն են եղել, Թումանյանը վկայում է, որ ժամանակի ընթացքում իր և Ստեփանի հայացքների մեջ կատարվել են էական տեղաշարժեր: «Նվ մի քանի տարուց մեր վեճերը շատ էին փոխվել,—հիշում է բանաստեղծը:—Քանի ես հակվում էի դեպի օտար գրականություններն ու ցրվում դեպի հեռուները, նա ուժեղ թափով կենտրոնանում էր հայության վրա<sup>6</sup>: Ուրեմն Թումանյանն իր հոգևոր զարգացման ուղին այստեղ ներկայացնում է իբրև անցում աղգային գրական-հասարակական խնդիրներից դեպի ավելի ընդհանուր, համամարդկային հետաքրքրություններ:

Բայց սրա կողքին համադրենք միևնույն 1919 թ. վերջին մի զրույցի ժամանակ բանաստեղծի ասած հետևյալ խոսքերը. «Ես առաջ Պուշկինի, Լերմոնտովի ազդեցության տակ էի, հիմա Արևելքին եմ դալիս. դալիս եմ դեպի մերը—ազատաշրվում ենք<sup>7</sup>: Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ Թումանյանն իր մտավոր զարգացման մի ուրիշ ընթացք է նշում՝ մի յուրօրինակ դարձ միջաղգային գրականությունից դեպի աղգային արևելյան արմատները:

Միևնույն թվականին կատարած այս երկու հայտարարությունները առաջին հայացքից հակասում, նույնիսկ ժխտում են իրար: Սակայն թափանցենք բանի էության մեջ և կհամոզվենք, որ իր հոգվածում և ապա զրույցի մեջ Թումանյանն ըստ էության անդրադարձել է իր հոգևոր-ստեղծագործական որոնումների տարբեր կողմերի. մի դեպքում՝ գրական մտահորիզոնի և հետաքրքրությունների ընդլայնման, միջաղգային արժեքների յուրացման հարցին (հակվում էի դեպի օտար գրականություններն ու ցրվում դեպի հե-

4 Տե՛ս նույն տեղում, էջ 106—107:

5 Ն. Թումանյան. Հուշեր և զրույցներ. 2-րդ քարեփոխված հրատ., Երևան, 1987, էջ 246:

6 Հովհ. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու. հ. 7, Երևան, 1995, էջ 332:

7 Ն. Թումանյան. նշվ. աշխ., էջ 216:

ուռնները», իսկ մյուսում՝ ազգային գրական արմատներին վերադառնալու, նրանց սկզբունքները սևփական ստեղծագործության մեջ կիրառելու խնդրին («Հիմա Արևելքին և մ գալիս. գալիս եմ դեպի մերը»): Թումանյանի գիտակցության մեջ և գրական աշխատանքում այս երկու կողմերը, իհարկե, շեւհակադրվում, այլ լրացում են իրար՝ ամբողջացնելով նրա ստեղծագործական դեմանկարը:

Նվ ապա, չպակաք է շփոթել նաև այն երկու մտեցումները, որոնց մասին խոսում էր Վարդգես Ահարոնյանը: Արևմուտքում ստեղծված գրական-մշակութային արժեքների նկատմամբ հետաքրքրությունը Թումանյանին ուղեկցել է կյանքի բոլոր փուլերում՝ ավելի ու ավելի խորանալով, հարստանալով նոր կողմերով: Սակայն Արևմուտքը խորթ և անընդունելի էր նրա համար՝ այնտեղ տիրապետող բարոյական ըմբռնումներով և մարդկային հարաբերություններով: Թումանյանի հարազատ տարերքը Արևելքն էր, ուր և նա որոնում էր իր րտոյազեղազիտական իդեալները: Շատ օրինակներից հիշենք միայն մեկը՝ 1919 թ. մի գրույցի ժամանակ Խաբինդրանաթ Թագորի մասին ասածը, որին Թումանյանն անվանել է լավագույն կրոզր «Արևելքի բարության ու խաղաղության»<sup>8</sup>, չավ հայտնի է, որ բարությունը, խաղաղությունը մարդկանց և ազգերի միջև Թումանյանը համարում էր ամենաբարձր կենսական և բարոյական արժեքները: Իսկ այդ արժեքների լավագույն մարմնավորումը նա տեսնում էր, ահա՛, Արևելքի փրիստոփայության և արվեստի մեջ:

Բնորոշ է, որ Թումանյանը մեծ ուշադրությամբ ու համակրանքով է հետևել այն բոլոր գիտական հրապարակումներին, որոնք փաստական հիմքի վրա ցույց էին տալիս Արևելքի ավանդը մարդկության հոգևոր և գեղարվեստական առաջընթացի մեջ: Դրա ամենացայտուն արտահայտությունը 1911 թ. գրված այն հոդվածն է, որը կրում է շատ իմաստալից, խորհրդանշական մի վերնագիր՝ «Արևելքից՝ Արևմուտք»: Հոդվածում նշվում է գարասկզբին հայագիտական հետազոտությունների նկատելի աշխուժացման փաստը՝ այդ առթիվ հիշելով Մեսրոպ եպիսկոպոսի, Սահակ Ամատունու, Տիրույր վարդապետի, Կոմիտասի, Ստրժիղովսկու հայտնի աշխատությունները: Սակայն հոդվածի անմիջական առիթը Գարեգին Հովսեփյանի «Մանրանկարչության արվեստը հայոց մեջ» գիրքն է: Այն գրավել է բանաստեղծին, ամենից առաջ, նրանով, որ հաստատում է մանրանկարչության զարգացման մեջ հայկական (և ընդհանրապես արևելյան) արվեստի առաջնության գաղափարը: Մի կողմ թողնելով մտքերով ու փաստերով շատ հարուստ այդ հոդվածի մյուս մասերը, մեջ բերենք միայն հետևյալ պարբերությունը, որը և, անշուշտ, կենտրոնական նշանակություն ունի ամբողջ շարադրանքի համար. «Շարունակ այն կարծիքն է եղել իշխողը, թե քրիստոնեական արվեստը, իր սկիզբն առնելով հռոմեական կաթոլիկներից, Արևմուտքից է եկել դեպի Արևելք, և հայկական քրիստոնեական արվեստն էլ ազդված է նրանից բյուզանդականի միջոցով: Հայր Հովսեփյանը գուցե և ապացուցելու, որ հակառակն է եղած, Արևելքից է գնացել դեպի Արևմուտք, ցույց է տալիս արվեստի և մանրանկարչության մի ընդհանուր հայրենիք, առաջավոր Ասիայի երկրներում, Պարսկաստանի գլխավորությամբ, որոնց շարքում Հայաստանը զբաղվում է ուրույն ու պատվավոր տեղ»<sup>9</sup>:

Ավելիորդ է ապացուցել, որ այսպիսի մտքեր արտահայտելիս Թումանյանը ղեկավարվում էր ոչ թե ազգային հայրենասիրության ինչ-որ վերացական ըմբռնումով, այլ պատմական ճշմարտությունը վերականգնելու և գնահատելու մղումով:

Սակայն Թումանյանի հայացքները Արևելք—Արևմուտք փոխհարաբերության վերաբերյալ ամենից խոր և ամբողջական տեսքով շարադրվեցին

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 181:

<sup>9</sup> Հ ո ս Վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, Երևան, 1994, էջ 334:

1916 թ. գրած «Արևելքի նոր դարադուլիսը» հոդվածում<sup>10</sup>: Կարելի է ասել, որ հադիվ 2—3 էջ զբաղեցնող այս փոքրիկ հոդվածը (ինչպես և Թումանյանը դրական-նրապարակախոսական հոդվածներից շատերը) իր պարունակած հարցադրումներով ու մտքերով մի ամբողջ մենագրության կշիռ ունի: Այս նյութի կարևոր նշանակությունն ընդգծվում է նաև հետևյալ հանգամանքով. այն առարկայորեն ցույց է տալիս, որ «Արևելք—Արևմուտք» հակադրույթի նկատմամբ Թումանյանի մշտական ուշադրությունը սոսկ տեսական, պատմադիտական իմաստ չունի, այլ ուղղակի կապվում էր հայ ժողովրդի ազգային ճակատագրի հարցերի հետ:

Հիշեցնենք այս համեմատաբար քիչ հայտնի թումանյանական հոդվածում արծարծված հիմնական գրությունները:

Նախ, Թումանյանն ունի այն խոր ըմբռնումը, որի համաձայն Արևելքն ու Արևմուտքը պատմական, մշակութային և բարոյափիլիսոփայական ուրույն աշխարհներ են՝ ձևավորված դարերի ու հաղարասյակների ընթացքում: Հոդվածն սկսվում է այդ գրությունի սեղմ, բայց տարողունակ ձևակերպմամբ. «Ասիան ու Եվրոպան կամ, ուրիշ խոսքով՝ Արևելքն ու Արևմուտքը լոկ աշխարհագրական տերմիններ չեն, այլև տարբեր քաղաքակրթություններ ու աշխարհայացքներ»: Աշխարհի այդ երկու ծայրափևերը միշտ մեկը մյուսին ներկայացրել են իրենց առավել զորեղ ուժով, որը և փոխադարձ պատվերապետ է ստեղծել նրանց մասին: Եվրոպայի կամ Արևմուտքի ներկայացուցիչներ են եղել սայա Հունաստանը, ապա Հռոմը, Բյուզանդիան, իսկ Ասիան կամ Արևելքը արևելյացիներ են, Բաբելոնը, հետո Ասորեստանը, Պարսկաստանը կամ արաբացի... յուսիֆայությունը: Սկսած հին աշխարհից՝ Արևելքը մարդկությանը տվել է կրոններ և փիլիսոփայական սիստեմներ, մեծ բանաստեղծներ ու գիտնականներ: Այդ պատճառով էլ այն ավանդական խոսքի մեջ, թե «Արևելքից է լույսը», Թումանյանը տեսնում է ոչ թե սովորական արևածագի ըմբռնում, այլ հավաստումը Արևելքում ստեղծված այն հոգևոր մեծ արժեքների, որոնք ամբողջ մարդկության սեփականությունն են դարձել:

Պատմական իրավիճակը էպոս փոխվեց, երբ թուրքական ցեղերը գրավեցին Առաջավոր Ասիան, ներխուժեցին Եվրոպա, և Թուրքիան դարձավ Արևելքի ներկայացուցիչը արևմտյան ժողովուրդների առջև: «...Արևելքը երբեք չէր ունեցել, — դառնություն մը նշում է Թումանյանը, — էսքան վայրենի, էսքան անկուտուր ու անարժան մի ներկայացուցչություն... Թուրքական գերիշխանությունից հետո Արևելքը և խավարն ու բարբարոսությունը դարձան հոմանիշ հասկացողություններ»: Այնուհետև, ընդամենը մի քանի պարբերությամբ, Թումանյանը զծագրում է համաբնական պատկերը այն անվերջ ոճիրների ու շարիքների, որ մարդկության դեմ նյութել և իրագործել է թուրքական տիրապետությունն իր արյունոտ սրով: Այդ սրով նա մորթել է Արևելքի կուլտուրական ժողովուրդներին, ոչնչացրել նրանց կերտած նյութական և հոգևոր արժեքները, ապա 400 տարի շարունակ գրոհել է Եվրոպայի վրա՝ ավերելու համար ամեն ինչ, «իր ձիանների ամբակների տակ տրորելու հումանիզմն ու վերածնությունը»:

Այսպիսով, Թումանյանը որոշակիորեն տարբերում է Արևելքի երկու ըմբռնում: Մեկը հին Արևելքն է իր հոգևոր մեծ գանձերով, մյուսը՝ Թուրքիայի բերած ավերածությունն ու խավարը: Առաջինի մեջ նա տեսնում է մարդկության պարծանքը, նրա հավերժական ուղեկիցներից մեկը, իսկ երկրորդը համարում է մարդկության ամոթը, պատմության մեծագույն շարիք ու դժբախտություն, որը պետք է դատապարտվի և մեկընդմիջտ բացառվի զարգացման հետագա ընթացքի մեջ:

Ինչպես տեսնում ենք, Թումանյանն Արևելքի մշակույթը քնահատում է ոչ թե կրոնական շփանհիշով, այլ, ամենից առաջ, հումանիզմի դիրքերից: Այդ առումով էլ թուրքական ներխուժման հետ կապված իրողությունները

<sup>10</sup> Նույն տեղում, հ. 7, 1995, էջ 272—275:

նա բացարձակորեն խորթ է համարում բուն արևելյան մշակույթի ոգուն: Եվ ահա թե ինչու Օսմանյան կայսրության նվաճումների ու ոճիտների դեմ Արևմտյան Եվրոպայի և ապա Ռուսաստանի դարավոր մաքառումների մեջ Թուրանյանը տեսնում է ոչ միայն ռազմաքաղաքական, այլև, առաջին հերթին, հումանիստական մեծ իմաստ, անգնահատելի ավանդ մարդկության ընդհանուր առաջադիմության գործում: Նա գրում է. «Մեծ է Ռուսաստանի էս ծառայությունը քաղաքակիրթ աշխարհքի առաջ, և երբևէ նրա կառավարության հոռի կողմերը չպետք է արգելեն տեսնելու էս մեծ գործը, որի հաջող ավարտումը համաշխարհային տոն է քաղաքակրթության համար»:

1916 թվականին, երբ դրվում էր այս հոդվածը, հիմքեր կային հուսալու, որ պատերազմը շուտով կավարտվի «մեծ ոճրագործի» վերջնական պարտությամբ: Դա էլ իրավունք է տվել Թուրանյանին իր խոսքն ավարտելու լավատեսական բարձր տրամադրությամբ. «Պատմական ի՛նչ հոյակապ ավետիս: Բացվում են Արևելքի ոսկի դռները ազատ ժողովուրդների, լուսավորության ու քաղաքակրթության համար, և սկսվում է մի նոր դարագլուխ Արևելքի պատմության մեջ»:

Թուրանյանի մեղքը չէ, որ նրա սպասումները չիրականացան... Այդուհանդերձ «Արևելքի նոր դարագլուխ» երազանքը մի քաղաքական և գեղագիտական համապարփակ իդեալ էր, որը շատ կարևոր տեղ է գրավում նրա աշխարհայացքի և ստեղծագործության ընդհանուր համակարգում:

Մտորելով Արևելքի և Արևմուտքի փոխհարաբերության մասին, Թուրանյանը, բնականաբար, միշտ աչքի առաջ է ունեցել նաև այն խնդիրը, թե այդ հակադրության մեջ ի՛նչ տեղ է պատկանում Հայաստանին, հայ ժողովրդին: Այլ կերպ ասած՝ Արևելքը կնք մենք, թե՞ Արևմուտքը, արևելյան է մեր մշակույթը, թե՞ արևմտյան: Հայ ժողովրդի պատմության, նրա մշակույթի ուսումնասիրության մեջ այս հարցն անպայմանորեն ծագում է այն պարզ պատճառով, որ, ինչպես գրել է Թուրանյանը մեկ այլ առիթով, մեր Երկիրը դարերի ընթացքում եղել է աշխարհքների կամուրջների վրա կեցած, մեծ ժողովուրդների մաքառումների ճանապարհին, ոտի տակ գնացած, մեծ բանակների ձիանների սմբակներից մաշված»<sup>11</sup>:

Առաջադիր հարցն ըմբռնելու համար կարևոր է հատկապես կյանքի վերջին շրջանում (հավանաբար՝ 1919—1920 թթ.) Թուրանյանի կատարած հետևյալ գրառումը.

«Մենք մեջտեղն ենք—հոգևոր Արևելքի և գործնական Արևմուտքի: Արևելքը—մարդը հասցրել է աստծուն, տիեզերքին, Աթմանին խառնել: Իսկ Արևմուտքը—ամենաշատը մինչև դասակարգը: Եվ ունեցել է էնպես թուխքներ—ինչպես ֆրանսիական հեղափոխությունը—հավասարություն, Լեզբայություն, և կամ անգլիական մեծ խարտիան—մարդու իրավունքը...»

Երկուսի սինթեզը»<sup>12</sup>:

Ինչպես տեսնում ենք, Թուրանյանն աշխատել է օբյեկտիվորեն գնահատել Արևելքի և Արևմուտքի ավանդոր մարդկության մտավոր և քաղաքական զարգացման մեջ: Եվ, այնուամենայնիվ, անվիճելի է, որ նրա նախասիրությունը Արևելքն է, բայց հին Արևելքը՝ աշխարհին կրոնական և փիլիսոփայական ուսմունքներ, մեծ պոեզիա և արվեստ նվիրած Արևելքը: Բնորոշ է, որ Արևելքը նա գնահատում է մեկ, բայց շատ ընդգրկուն մակդիրով՝ հոգևոր, ի տարբերություն գործնական Արևմուտքի: Այսպես էր տեսնում նա աշխարհի երկու ծայրաթևերը, այս էր համարում առավել բնորոշը Արևելքի և Արևմուտքի համար:

Թուրանյանի այս գրության մեջ հիշատակվող Աթմանը հնդկական փիլիսոփայության և կրոնի հիմնական ըմբռնումներից մեկն է՝ մարդուն աստվածացնող և տիեզերքի հետ կապող ուսմունք: Այդ ուսմունքի մեջ նա գրտ-

<sup>11</sup> Վ ո Վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու. VI, Երևան, 1959, էջ 254:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 249:

նում կր շատ անպիսի գաղափարներ, որոնք հարազատ էին իրեն և բանաստեղծական մարմնավորում են ստացել յատկապես քառյակների մեջ: Միաժամանակ, նշելով վերջին դարերում Արևմուտքում ստեղծված սոցիալական պաղափարների նշանակությունը, Թումանյանը մեզ համար ամենից ճիշտ ուղին հասարում է արևելյան և արևմտյան սկիզբների համադրությունը: Ցավոք, այս դեպքում նա չի ծավալվել ու չի բացատրել, թե ինչպե՛ս է հասկանում այդ համադրության ուղիներն ու շահանքները:

Թումանյանի առաջադրած այս հարցի կարևորությունը պատկերացնելու համար հիշեցնենք, որ դարասկզբին հայ ժողովրդի ճակատագրի, նրա մշակույթի մեջ արևելյան և արևմտյան տարրերի համադրության մասին հաճախ է խոսվել: Ամենից ծանրակշիռն այդ ուղղությամբ եղավ Վալերի Բրյուսովի դրույթը՝ հայ բանաստեղծության մասին նրա գրած նշանավոր հետազոտության սկզբում: «Երկու ուժ, երկու հակադիր սկզբունք,—գրում էր Բրյուսովը,—խաչաձևվելով, միահյուսվելով ու ձուլվելով մի նոր, միասնական երևույթի մեջ, ուղղություն են տվել Հայաստանի կյանքին և ստեղծել նրա ժողովրդի բնավորությունը հազարամյակների ընթացքում: Արևմուտքի սկզբունքը և Արևելքի սկզբունքը, Եվրոպայի ոգին և Ասիայի ոգին... Հայ ժողովրդի պատմական առաքելությունը, որ թելադրված է նրա զարգացման ամբողջ ընթացքով, եղել է Արևելքի և Արևմուտքի համադրության որոնումն ու ձևեր բերումը: Եվ այդ ձգտումն ամենից լրիվ արտահայտվել է Հայաստանի գեղարվեստական ստեղծագործության, նրա գրականության, նրա պոեզիայի մեջ»<sup>13</sup>:

Րոք քաղաքացիական և գեղագիտական մտածողության ուրույն ուղիներով Արևելքի և Արևմուտքի համադրության նույն գաղափարին էր հանգում նաև Թումանյանը:

Զգալիորեն այլ կերպ էր պատկերացնում այս հարցը Թումանյանի մի ուրիշ ժամանակակից և բարեկամ՝ Լևոն Շանթը: 1922—1923 թթ. տպագրված «Անկախությունը պահանջ ազգային գոյության» ընկերաբանական աշխատությունը նա սկսում էր «Արևելք և Արևմուտք» գլխով, որի հիմնական պաղափարն ամփոփված է հետևյալ տողերում.

«Սվրոպա և Ասիա, այսինքն՝ ծով ու ցամաք, շարժում ու թմիր, հառաչողիմություն ու պահպանողական ոգի, անհատական ճիգ ու հեղինակություն, դեմոկրատիզմ ու բռնակալություն, մարդկային հպարտություն ու «քու ոտքիդ փոշին»... Ատոր համար է, որ Արևելքն ու Արևմուտքը իրար լեզու չեն հասկնար... խորապես թշնամի են իրար. և այդպես եղեր են միշտ»<sup>14</sup>:

Ինչպես երևում է այս տողերից, Լ. Շանթը բաժանում է դարասկզբին արևմտյան գրականության և փիլիսոփայության մեջ լայնորեն տարածված այն հայացքը, որի համաձայն Արևելքն ու Արևմուտքը հավերժական և անհաշտելի հակոտնյաններ են: Մի հայեցակետ, որն իր դասական ձևակերպումն է ստացել անգլիացի մեծ գրող Լեոնարդո Կիպլինգի թեմավոր խոսքի մեջ. «Արևմուտքը Արևմուտք է, Արևելքը՝ Արևելք, և նրանք երբեք չեն հանդիպի»: Կասկած չկա, որ այդ հակադրության մեջ Շանթի համակրանքն ամբողջովին և անվերապահորեն Արևմուտքի կողմն էր: Մի դիրքորոշում, որը ուղղակի բխում էր գրողի արևմտամետ (ավելի լավ է ասել՝ եվրոպամետ) ըմբռնումներից, որոնց բազմաթիվ արտահայտություններ կան նրա և՛ գեղարվեստական, և՛ հրապարակախոսական երկերում:

Թումանյանին խորթ էր այդ դիրքորոշումը, և նա տարբեր առիթներով արտահայտել է իր բացասական վերաբերմունքը բարեկամի «Եվրոպապաշտություն» նկատմամբ: Բերենք միայն հետևյալ տողերը 1908 թ. Փիլիպոս Վարդապարյանին գրած նամակից. «էն էլ Շանթը—ինքն էստեղ, միտքը Եվ-

<sup>13</sup> Письма Армении, под редакцией В. Брюсова. М., 1916, с. 23.

<sup>14</sup> Լևոն Շանթի երկերը, 5-րդ հատոր, Բելուսի, 1946, էջ 168—169:

րոպա: Դաս է տալիս տրտնջալով—նրա համար, որ Եվրոպա գնա, գասագիրք է շինում—որ Եվրոպա գնա, պիես է գրում, որ Եվրոպա գնա, գարնանն սպասում է, որ Եվրոպա գնա, վերջապես կնոջն ու երեխաներին արդեն ուղարկել է, որ ինքն էլ ստիպված Եվրոպա գնա...»<sup>13</sup>: Չնայած այդ տողերի կատակախառն ոճին, պարզ է, որ Թումանյանը հավանություն չի տալիս իր բարեկամի ըմբռնումներին և վարքագծին:

«Արևելք—Արևմուտք» հակադրույթի թումանյանական ըմբռնումը շատ ավելի հավասարակշռված է և օբյեկտիվ, թեև բանաստեղծի համակրանքն էլ բնագնանուր առմամբ Արևելքի կողմն է: Այդ համակրանքի մեջ որոշակիորեն արտահայտվել են Թումանյանի աշխարհայացքի և ստեղծագործության ազգային-ժողովրդական արմատները, նրա գեղագիտական իդեալի խորքն ու լայնությունը: Իր փիլիսոփայության, էսթիկայի և էսթետիկայի շատ էական կողմեր նա քաղում էր հին Արևելքից: Ահա թե ինչու կյանքի մալրամոտին գրած իր հիշյալ երկու քառյակներով նա կարծեք թե ցանկացավ ի լուր աշխարհի հալոտարարել. ես իմ ամբողջ էությունս ձղտում եմ՝

«Ինչ Արևելքն աստվածային—հայրենիք իմ հոգու...»:

#### АНТИТЕЗА «ВОСТОК—ЗАПАД» В ПОНИМАНИИ ОВ. ТУМАНЯНА

Академик НАН РА ЭД. М. ДЖРБАШЯН

#### Резюме

Названная проблема прямо или косвенно отразилась в публицистике и художественном творчестве великого национального поэта Армении Ованеса Туманяна. Ей, в частности, посвящены два четверостишия, написанные в 1919 и 1921 годах. Восток и Запад, в понимании поэта, не только географические термины, но и две различные цивилизации и мировоззрения, сформировавшиеся в течение долгих веков. Туманян высоко ценил духовные ценности, созданные на Западе, но он резко отвергал бессердечие и алчность, царящие там в отношениях между людьми. «Родной своей души» поэт считал «божественный Восток» с его гуманистической философией, этикой и эстетикой. Однако и сам Восток для Туманяна понятие неоднозначное. Он четко различал, с одной стороны, древний Восток, подаривший миру религиозные и философские системы, великих поэтов и ученых, которые стали вечными спутниками человечества. Но положение резко изменилось, когда с Востока в Переднюю Азию и Европу вторглись турецкие племена, растоптав плоды гуманизма и Ренессанса. С тех пор в глазах многих поколений Восток стал синонимом мракобесия и варварства. Данная концепция изложена в статьях Туманяна «Из Востока на Запад» (1911), «Новая эра Востока» (1916), «Из дней юности» (1919), а также в письмах и беседах поэта. Армения, по убеждению Туманяна, находится между *духовным* Востоком и *деловым* Западом, со всеми вытекающими отсюда последствиями в политическом и экономическом, культурном и художественном развитии.

<sup>13</sup> Հ ո վ ճ . Թ ո մ ա ն յ ա ն . Երկերի ժողովածու. հ. V, Երևան, 1947, էջ 310: